ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2018 թվականի 02-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը հաստատելու մասին» N05-Ա որոշման հավելվածի 35-րդ կետից հանել «Ստուգաթերթի լրացված վերջնական օրինակը ստորագրվում է ստուգողների և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կամ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից լիազորված այլ անձի կողմից (այսուհետ՝ Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձ): Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի կողմից ստուգաթերթը ստորագրելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ստուգաթերթում կատարվում է համապատասխան նշում:» նախադասությունները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՄԻՆԱՍՅԱՆ